



ARMENIAN PATRIARCHATE OF JERUSALEM

بطريركية الأرمن القبطية الأرثوذكسية في القدس

PATRIARCAT ARMÉNIEN DE JÉRUSALEM

18 Սեպտեմբեր, 2002

Ազնուափայլ
Տիկին Փօնթիշ Երամեան
Ատենապետ Ֆիլատելֆիոյ
Պոլսահայ Միութեան

Սիրելի Տիկին Երամեան,

Գոհունակութեամբ տեղեկացանք որ Ֆիլատելֆիոյ Պոլսահայ Միութիւնը իր պոլսական աւանդական սովորութեան համաձայն, կազմակերպած է «Սիրոյ Սեղան» ճաշկերոյթ մը, նուիրատուութեանց հկամուտը յատկացնելով Երուսաղէմի Պատրիարքութեան սուրբ տեղեաց բարեկորոգման:

Դժբախտաբար Սուրբ Երկրի մէջ, քաղաքական ներկայ կացութիւնը սպաննութիւն եւ կործանարար հետեւանքներ կը յառաջացնէ: Մեր Պատրիարքութիւնն ալ, Բեթղեհէմի շրջակայքէն շրջանին, ենթարկուեցաւ վնասներու, թէ՛ Քրիստոսի Ծննդեան սրբավայրին եւ թէ Ծննդեան Տաճարին կից Հայոց Վանքին մէջ:

Եւ Գրիգոր Պարոն Տէր Պատրիարքի անունով ծանօթ երեք յարկանք շէնքը եւ երեսունվեց էջեր տարածութեամբ եւ 1600 ձիթապտուղի ծառերով ձիթաստանը նոյնպէս վտանգի տակ էր, Պետական Պաշտպանութեան Նախարարութեան կողմէ ապահովութեան պարիսպ եւ խրամատներ կառուցելու ծրագրին ի նպաստ գործածելու նպատակով:

Պատրիարքարանս սակայն դատարան դիմեց այդ ծրագիրը բարեփոխելու:

Յոյսով ենք որ բանակցութիւնները շուտով պիտի յանգին աւելի նպաստաւոր պայմաններու, ապահովելով նաեւ կալուածին Պատրիարքութեան սեփականութիւնը մնալու իրաւական հանգամանք:

Մեր ժողովուրդին ցուցաբերած նախանձախնդրութիւնը մեր հոգեւոր ժառանգութեանց հանդէպ, մեր Ազգային եւ Միջազգային կրօնական կեդրոններէն եւ կազմակերպութիւններէն կատարուած դիմումները պետական պատասխանատու ղեկավարներուն, իրենց բարի հետեւանք ունեցան, բանակցութիւններով արդար լուծումի մը յանգելու համար:



Շնորհակալութիւն բոլորին:

Կը մաղթեմք որ ձեր այս նախաձեռնութիւնը քաջալեր հանդիսանայ մեր ժողովուրդին, յիշելու յաւերժական Երուսաղէմը եւ Հայկական սրբավայրերը, թէ՛ նախանձախնդիր մնալով անոնց տեւական բարեգարդման եւ ապահովութեան, եւ թէ՛ ուխտագնացութիւններով գորանալու եւ Քրիստոսի օրհնութիւնը փոխանցելու սերունդէ սերունդ:

Կ'աղօթեմք որ Աստուած իր շնորհներով գորացնէ մեր Ազգին զաւակները, եւ զանոնք առողջ պահէ միշտ հոգիով ու մարմինով:

Վարձքերնիդ կատար: Եւ ուխտերնիդ ընդունական ըլլայ միշտ:

Սիրոյ Ողջունիւ

Թորգոմ Ա.բ. Բանուկեան
Հայ Պատրիարք Երուսաղէմի